ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» ապրիլի 2021 թվականի N 65

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու 2019թ. հունիսի 26-ի թիվ 49-Ա որոշումը, Ստեփանավան համայնքի Թելմանի փողոց թիվ 24 վագոն-տնակի բնակիչ Աշոտ Սիմոնյանի 16.03.2021թ. թիվ Ս-121 դիմումը, Աշոտաբերդ թաղամասի թիվ 27/6 տան բնակիչ Մարինե Պողոսյանի 16.03.2021թ. թիվ Պ-124 դիմումը, Կաթնաղբյուր վարչական բնակավայրի 2-րդ փողոց թիվ 20 տան բնակիչ Արայիկ Ավոյանի 22.03.2021թ. թիվ Ա-128 դիմումը և ՀՀ Լոռու մարզպետի 26.03.2021թ. N 01/104.3.2/02300-2021թ. գրությունը կապված Կաթնաղբյուր վարչական բնակավայրի բնակիչ Էդվարդ Առաքելյանի ՀՀ Լոռու մարզպետին ուղղված դիմումի, Ստեփանավան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 08.02.2021թ. թիվ 11/1 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի 31.03.2021թ. արձանագրությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ 1-ին մասի հոդվածի 24-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Ստեփանավան համայնքի բնակիչներ Աշոտ Սիմոնյանին տրամադրել 20000 (քսան հազար) ՀՀ դրամ, Մարինե Պողոսյանին 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ և Կաթնաղբյուր վարչական բնակավայրի բնակիչներ Արայիկ Ավոյանին 30000 (երեսուն հազար) և Էդվարդ Առաքելյանին 20000 (քսան հազար) ՀՀ դրամ սոցիալական աջակցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» ապրիլի 2021 թվականի N 66

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 06-007-0131-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱՐԻՆԵ ՄԻՇԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Միշայի Սիմոնյանի կողմից ներկայացված 31.03.2021թ. թիվ Ս-135 դիմումը, ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի ԱՐԱԴ/2306/02/19 քաղ. գործով 19.02.2020թ. վճիռը, «Գ. ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք.Ստեփանավան 06-007-0131-0002 ծածկագրում գտնվող 603.9 քմ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հողհատկացման հիմքերը՝
   ա/ Ստեփանավան քաղաքի 06-007-0131-0002 ծածկագրի հողամասի մակերեսը 603.9 քմ
   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 603.9 քմ մակերեսով հողամասից 600 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Նարինե Միշայի Սիմոնյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 3.9 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Նարինե Միշայի Սիմոնյանին համաձայն «Գ. ՎԵՔԻԼՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծի: 06-007-0131-0002 ծածկագրի հողամասի վրա առկա է 1991թ. ինքնակամ կառուցված 106.42 քմ արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի տուն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» ապրիլի 2021 թվականի N 67

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՍԱՄՎԵԼ ԱՐՄԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ստեփանավան համայնքի ղեկավարի 10.10.2012թ. թիվ 274 որոշման համաձայն անչափահաս, Սամվել Արմանի Պետրոսյանի նկատմամբ նշանակվել է խնամակալ տատը՝ Անահիտ Ավետիքի Պետրոսյանը: Լրացել է Սամվել Արմանի Պետրոսյանի 14 տարեկանը, ուստի անհրաժեշտություն է առաջացել վերջինիս նկատմամբ սահմանել հոգաբարձություն:

Ներկայումս Սամվել Արմանի Պետրոսյանը գտնվում է հայրական կողմի տատի՝ Անահիտ Ավետիքի Պետրոսյանի խնամքի տակ: Երեխայի ծնողները բացակայում են Հայաստանի Հանրապետությունից, վերջիններս մեկնել են արտերկիր արտագնա աշխատանքի:

Երեխայի նկատմամբ հոգաբարձություն սահմանելու խնդրանքով դիմել է նրա տատը՝ Անահիտ Ավետիքի Պետրոսյանը:

Հիմք ընդունելով Անահիտ Ավետիքի Պետրոսյանի 06.04.2021թ. թիվ Պ-146 դիմումը, Ստեփանավանի համայնքապետարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 13.04.2021թ. նիստի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33, 35, 37, 38 հոդվածներով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8, 13 հոդվածներով, ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով որոշում եմ՝ ***որոշում եմ.***

1. Անչափահաս՝ Սամվել Արմանի Պետրոսյանի (ծնված՝ 14.06.2005թ.) նկատմամբ հոգաբարձու նշանակել չափահաս գործունակ քաղաքացի՝ Անահիտ Ավետիքի Պետրոսյանին (անձնագիր՝ AN0472942, տրված 15.05.2013թ., 053-ի կողմից):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ